186

Թիւ 27551
Դեկտեմբեր 4, 1981

Հոգեշնորհ
Տ. Արշէն Վրդ. Այվազեան
Հովիւ Ս. Երրորդութիւն Եկեղեցւոյ
Չելթընհամ.

Սիրելի Հայր Արշէն,

Ստացած ենք Նոյեմբեր 25, 1981 թուակիր ձեր նամակը՝ Սարգիս Ծաուտալարեանի կապակցութեամբ:

Նիւ Պրիթընի Ս. Յարութիւն Եկեղեցւոյ Հոգեւոր Հովիւին եւ ծխական Խորհուրդին ներկայացուցած խնդրանքին ընդառաջելով՝ մենք արտօնած էինք որ Սարգիս Ծաուտալարեան անպաշտօն կերպով օգնէ երիտասարդ դպիրներ մարզելու՝ որպէս զի անոնք կարենան եկեղեցական պաշտամունքներու մասնակցիլ: Նոյն ատեն, համաձայն մեր շրջաբերականին, չէինք արտօնած որ ան որպէս սարկաւագ Ս. Խորանին սպասարկէ եւ կամ մասնակցի եկեղեցական պաշտամունքներուն:

Մենք տեղեկութիւն չունէինք որ Եկեղեցւոյ դպրապետութեան համար կոչուելէն առաջ, մի քանի ամիսներ առաջ, երկու հոգիներ, որոնցմէ մէկը Սարգիս Ծաուտալարեան, նշանակուած էին դպրաց դասի երգեցողութեան հոգ տանելու համար:

Ս. Յարութիւն Եկեղեցւոյ Հոգեւոր Հովիւէն սուգեցինք որ Սարգիս Ծաուտալարեան պաշտօնապէս դպրապետ չէ նշանակուած:

Զայս կը հաղորդենք լուսաբանութեան համար:

Հետագային, եթէ թիւ 460 շրջաբերականով տեղեկացուցած մեր որոշումը փոխելու հարկը զգանք եւ արտօնենք որ Սարգիս Ծաուտալարեան պաշտօնապէս իր մասնակցութիւնը բերէ եկեղեցական պաշտամունքներուն, այն ատեն նոր շրջաբերականով մը մեր այս որոշումը կը հաղորդենք մեր ծուխերուն:

Սիրոյ ողջունիւ

ԹՈՐԳՈՄ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ
Առաջնորդ

# HOLY TRINITY ARMENIAN CHURCH

101 ASHMEAD ROAD, CHELTENHAM, PENNSYLVANIA 19012 • (215) 379-2515

THE VERY REVEREND ARSHEN AIVAZIAN, PASTOR

Նոյեմբեր 25, 1981

Գերաշնորհ Տ. Թորգոմ Արքեպիսկոպոս
Առաջնորդ Հայոց Հիւս. Ամերիկայի
Արեւելեան Թեմին,
Նիւ Եորք, Ն.Ե.

Գերաշնորհ Սրբազան Հայր,

Ձեր Դեկտեմբեր 13, 1979 թուակիր, թիւ 460 շրջաբերականով կ'արգիլէք ոմն Սարգիս Տաւուտլարեանի ''որեւէ մէկ պաշտօնով մասնակցելու մեր թեմին մէջ կատարուող պաշտամունքներուն''։ Կը ներփակեմ սոյն շրջաբերականի մէկ պատճէնը։

Վերջերս նոյն այս անձը ձեր ներկայութեան մասնակցեցաւ թեմիս Դպրաց Դասերու Տարեկան Համագումարին որպէս Դպրապետ մեր թեմի եկեղեցիներէն միոյն։

Կը խնդրեմ որ այս խնդիրը լուսաբանէք։

Խոնարհ Ծառայ Եկեղեցւոյ,

Արշէն Վրդ. Այվազեան

Ս. ԵՐՐՈՐԴՈՒԹԻՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՑ ԵԿԵՂԵՑԻ

ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ
DIOCESE OF THE ARMENIAN CHURCH OF AMERICA, 630 SECOND AVENUE, NEW YORK, N. Y. 10016 212 686-0710

ARCHBISHOP TORKOM MANOOGIAN, PRIMATE

ՇՐՋԱԲԵՐԱԿԱՆ ԹԻՒ 460

Վիճակիս Հոգեւոր Հովիւներուն
Եւ Ծխական Խորհուրդներու Ատենապետներուն

Սարգիս Տաւուտլարեան անունով անձ մը ներկայացած է մեր թեմի հոգեւորականներէն եւ Ծխական Խորհուրդներէն ոմանց եւ ինքզինք ներկայացուցած է իբրեւ սարկաւագ եւ մասնակցած է պաշտամունքներու, առանց յայտնելու իր ինքնութիւնը։

Այս անձը կարգաթող Գեղարդ Աբեղայ Տաւուտլարեանն է, Երուսաղէմի Սրբոց Յակոբեանց վանքէն։

Կ՚արգիլենք այս անձին որեւէ մէկ պաշտօնով մասնակցելու մեր թեմին մէջ կատարուող պաշտամունքներուն։

Սիրոյ ողջունիւ

ԹՈՐԳՈՄ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ
Առաջնորդ

Դեկտեմբեր 18, 1979

A gentleman by the name of Sarkis Daoudlarian has introduced himself to certain of our Diocesan Clergy and Parish Councils, has identified himself as a deacon, and has participated in Church services without revealing his true identity.

This person is Keghart Apegha Daoudlarian, from the St. James Convent of Jerusalem, who has left the Holy Orders. We forbid this person to participate in any capacity in the celebration of Church services within our Diocese.

Prayerfully,

Archbishop Torkom Manoogian
Primate

Very Reverend
~~Zaven Arz~~oumanian,
Pastor

(Area Code 215)
Church: ESsex 9-2515
Residence: RAndolf 5-6999



**HOLY TRINITY ARMENIAN APOSTOLIC CHURCH**
101 ASHMEAD ROAD, CHELTENHAM, PENNSYLVANIA 19012

Մարտ 11, 1968

Գերաշնորհ
Տ. Թորգոմ Եպս. Մանուկեան, Առաջնորդ
Հայց. Եկեղեցւոյ Հիւս. Ամերիկայի,
Նիւ Եորք

Գերաշնորհ և Սիրելի Սրբազան,

Գիտեմ թէ ծանրաբեռնուած էք խճողեալ աշխատանքներով և յետին մանրամասնութիւններ յուզող մտահոգութիւններով, որոնց համար Աստուծոյ օգնականութիւնը կը հայցենք Ձեզի համար:

Կը փափաքիմ տեղեկացնել թէ Կիրակի Ապրիլ 21ին որոշած ենք տօնակատարել Եկեղեցւոյս Դպրաց Դասի 40ամեակը: Այդ առիթով հրաւիրած ենք նախկին Առաջնորդ Գեր. Տ. Սիոն Արքեպս.ը մատուցանելու օրուան Ս. Պատարագը և նախագահելու յետ միջօրէի ճաշկերոյթին: Նոյն առիթով կը մտածենք փոքրիկ գրքոյկ մըն ալ պատրաստել, որուն համար կը խնդրենք Ձեր օրհնութեան գիրը:

Ձեր ժամանակը շատ սուղ է մանաւանդ այս օրերուս, սակայն կը խորհիմ թէ կարեւոր է որ Ձեր օրհնութեան գիրը ունենանք որեւէ ատեն մինչեւ Ապրիլի առաջին շաբաթը:

Մասնաւոր շնորհակալութեամբ եւ սիրով

Աղօթակից,

[signature]

Զաւէն Ծ. Վրդ. Արզումանեան,
Հովիւ

# Գ Ի Ր   Օ Ր Հ Ն Ո Ւ Թ Ե Ա Ն

## Ս.ԵՐՐՈՐԴՈՒԹԻՒՆ ԵԿԵՂԵՑՒՈՅ ԴՊՐԱՑ ԴԱՍԻ 40ԱՄԵԱԿԻ ԱՌԹԻՒ

Հաճոյքով իմացանք որ Նորթ Ֆիլատելֆիոյ ձեր Ս. Երրորդութիւն եկեղեցւոյ Համայնքը պատրաստութիւն կը տեսնէ կիրակի, Ապրիլ 21ին ճաշկերոյթով մը տօնախմբելու դպրաց դասի գործունէութեան քառասնամեակը։

Երաժշտութիւնը ընդհանրապէս մարդոց մէջ կը բիւրեղացնէ ազնիւ զգացումներ եւ հոգեկան գեղեցկութիւն ու խաղաղութիւն կը բերէ։ Իսկ երաժշտութեամբ արտայայտուած աղօթքը եկեղեցիին մէջ կը սերտացնէ յարաբերութեան կապը Աստուծոյ եւ մարդոց միջեւ։

Հայաստանեայց Եկեղեցւոյ մէջ թէ պատարագի եւ թէ ժամասացութեան միջոցին յոյժ կենսական բաժին մըն է նաեւ երաժշտութիւնը։ Դպրաց դասի կատարումին միացած շարականներու երգեցողութիւնը, կը յաւելցնէ խորհրդաւորութիւնը ժամապաշտութեան եւ կը խորացնէ հաւատացեալներուն մէջ հաղորդութեան իմաստին վեհութիւնը։

Այս իմաստով ի հնուց մեծ կարեւորութիւն ընծայուած է մեր ժամասացութեան մէջ կանոնաւորուած երաժշտութեան։ Եւ դպրաց դասեր կոչուած են մենակատար եւ խմբական երգեցողութեամբ փայլ ու շքեղութիւն տալ մեր պաշտամունքին։

Ուստի, երբ կը յիշատակենք դպրաց դասի մը քառասուն տարուայ կատարած գործը եկեղեցւոյ մէջ, գոհութեամբ նշած կ՚ըլլանք մատուցուած նուիրեալ ծառայութիւն մը, որ ինքնին (?) արժանի կը հանդիսանայ բոլորիս խոր գնահատութեան։

Հետեւաբար, կ՚օրհնենք բարի յիշատակը անոնց, որոնք Ս. Երրորդութիւն եկեղեցւոյ դպրաց դասին մէջ զոհաբերութիւն (?), տոկունութիւն (?) եւ ազնուութիւն (?) կատարած են, եւ կը մաղթենք ներկայիս անոնց գործը շարունակողներուն կորով (?) ու յաջողութիւն, որպէսզի այսուհետեւ անոնք եւս կարենան իրենց քաղցրալուր երգեցողութեամբ պայծառացնել Հայաստանեայց Առաքելական Ս. Եկեղեցւոյ սրբազան արարողութիւնները Աստուծոյ փառքին համար։

Սիրոյ ողջունիւ

ԹՈՐԳՈՄ ԵՊԻՍԿՈՊՈՍ
Առաջնորդ

Ապրիլ 5, 1968
Նիւ Եորք